Ստեփան Զորյան

Հանցանք ու պատիժ

Հույս ունեմ, որ այս վերնագիրը կարդացողները գրվածքս չեն ընդունի որպես իրավագիտական տրակտատ, և եթե այդպես ընդունեն՝ շատ կսխալվեն, որովհետև սա մի հասարակ պատմություն է: Մի պատմություն այն մասին, թե ինչպես գյուղացի Մարկոսը, Նոր-Շենի այն զորավոր եկեղեցու երեսփոխը, գողության համար պատժեց իր որդուն:

Ինքս, իհարկե, ականատես չեմ եղել այդ բոլորին, բայց այսքանը գիտեմ, որ մի օր Մարկոսն ու իր կին Զարմանը շատ անհանգիստ էին: Վաղ առավոտից սկսած նրանք փոխառփոխ կանգնում էին սենյակի լուսամուտի առջև և նայում դեպի իրենց մառանը, որի հին դռան վրա փայլում էր մի նոր կողպեք, ինչպես կեղտոտ փողկապի վրա ադամանդյա քորոցը:

Բանն այն էր, որ մի ամբողջ շաբաթ շարունակ, ամեն օր նրանց մառանից գողություն էր կատարվում, և նրանք չգիտեին, թե ո՛վ է այդ բանն անողը: Ամեն օր, երբ Զարմանը մտնում էր մառան, տեսնում էր, որ մի անհայտ և անզգույշ ձեռք իր դրած բաները շարժել է տեղից, բացել է այս կամ այն թթվի բերանը և խուփը թողել գետնի վրա: Սկզբում Զարմանը կարծեց, թե այդ ամենն ինքն է անում, հետո մոռանում կամ թե չէ՝ «մուկ է դիպչում», բայց մի օր էլ, երբ նա աչքերը դեպի առաստաղը բարձրացրեց և սարսափով տեսավ, որ խնձորի, տանձի և խաղողի կախանները «թեթևացել» են, իսկույն գլխի ընկավ, որ մառանը գող է մտնում. իսկ թե ո՛վ տարակուսում էր: Տարակուսում էր, որովհետև մառան մտնող գողը նախ պետք է մտներ տուն, որ մառանի բանալին վերցներ: Բայց հետո ենթադրեց, որ դուռը կարելի էր բանալ և հարմարեցված բանալիով:

Սակայն ով պետք է լիներ դա այդ բաց անողը: «Չըլի մեր հոտաղն է», մտածեց Զարմանը և իր կասկածը, դեպքի հետ միասին, հայտնեց մարդուն:

Մարկոսը, որ գրել-կարդալ իմանալու պատճառով եկեղեցու երեսփոխ էր ընտրված և գյուղացիների մեջ համարվում էր խելոք մարդ, խնդաց կնոջ խոսքերի վրա և ասաց, որ դժվար թե Ադամն (հոտաղը) այդպիսի բան անի:

Բայց ո՞վ գիտի, ավելացրեց նա, ս. Գիրքն ասում է՝ մարդն անքննելի է, շատ կարելի է անում է. պետք է հաստատ իմանալ՝ հետո...

Կինը համաձայնեց:

Եվ նրանք ահա երկուսով, լուսամուտի առջև կանգնած, անհանգիստ աչքերով նայում էին դեպի մառանը, տեսնելու, իսկապես, ո՛վ է մտնելու այնտեղ: Եվ որովհետև նրանք կասկածում էին ծառային, այդ պատճառով առանձնապես հետևում էին նրա յուրաքանչյուր քայլին: Ադամը, որ մոտ երեսուն տարեկան մի տղա էր և որի միրուքն սկսվում էր ուղիղ աչքերի տակից, այդ օրը շարունակ գնում-գալիս էր մառանի առջևից՝ դարմանի քթոցը շալակին կամ խոտի խուրձը գրկին: Երբ նա հավասարվում էր մառանի դռան, մարդ ու կին անհամբեր սպասում էին, որ ահա ո՛ւր որ է Ադամը, քթոցը կամ խուրձը կգցի գետին, գրպանից կհանի ո՛վ գիտի որ աղբակույտում գտած մի ժանգոտ բանալի և, մառանի դուռը բանալով, կմտնի ներս: Բայց օրն եկավ ճաշ դառավ ոչինչ չպատահեց: Ադամը, սպասածի հակառակ, փոխանակ մառան մտնելու, գնաց նստեց գոմի պատի տակ, արևկող մի տեղ և սկսեց ապակու կտորով մաքրել տրեխացու կաշին:

Այս տեսնելով՝ մարդ ու կին մտածեցին, որ գողը ցերեկով գողություն չի անի. նա անպատճառ գիշերն է մտնում, պետք է ուրեմն գիշերը հսկել: Այս մտքի վրա էին նրանք, երբ շվշվացնելով ներս մտավ նրանց որդի Արտուշը՝ 14-15 տարեկան մի պատանի, որ ծխական դպրոցն ավարտելուց հետո պարապ շրջում էր գյուղում և երբեմն տերտերի տղայի հետ գնում էր գետը՝ ձուկ որսալու կամ անտառը՝ թռչուն սպանելու: Ներս մտնելով՝ նա անցավ սենյակից սենյակ և նորից շվշվացնելով դուրս եկավ:

Մարկոսը, որ ամենայն աչալրջությամբ հսկում է որդուն, որպեսզի նա վատ շրջան չմտնի և միշտ տերտերի տղայի հետ ընկերություն անի, այս անգամ էլ, որդու դուրս գնալուց հետո, նայեց նրա ետևից, տեսնելու թե որ կողմն է գնում:

Եվ հազիվ մոտեցել էր լուսամուտին՝ ետ դարձավ և անխոս ձեռով արավ կնոջը:

Զարմանն շտապ մոտ գնաց:

Եվ ահա թե ի՛նչ պատկերացավ նրանց առաջ:

Արտուշը կանգնել էլ մառանի դռանը և խլշած նայում էր շուրջը: Եվ շուրջը նայելով՝ ինչ-որ մի բան էր խաղացնում բռան մեջ ու շրթունքները շարժում, ինչպես երևում էր, շվշվացնում էր դարձյալ: Այսպես մի քանի անգամ նա լավ դիտեց շուրջը, ապա, ուրախ ցատկումներով մոտեցավ մառանի դռանը, շտապով բացեց այն և արագ մտավ ներս:

Գողը գտնվե՞ց, բացականչեց Մարկոսը:

Զարմանն ուզեց վազել մառան և որդուն տեղնուտեղը պատժել, բայց մարդը պահեց նրան:

Կա՛ց, թող սիրտը հովացնի:

Ու, կնոջ թևից բռնելով, նորից տարավ նրան լուսամուտի մոտ:

Չանցավ մի քանի րոպե Արտուշը պուտի պես կարմրած դուրս եկավ մառանից, դուռը կողպեց հապ-շտապ և, ձեռներն ուռած գրպանները կոխելով, վազեց դեպի խոհանոցը:

Հիմի ես ի՞նչ անեմ էդ փչին, ճչաց Զարմանը չարացած: Մատները չդնեմ ուրագի տակ ու փրթե՞մ...

Սո՛ւս, սաստեց նրան Մարկոսը, ոչինչ էլ հարկավոր չի: Թո՛ղ:

Ո՞նց թե՝ «թո՛ղ», բարկացավ Զարմանը: Թողնե՞մ իմ աչքի առաջ գողություն անեն: Էդ ի՛նչ խելք է:

Քեզ ասում եմ՝ թո՛ղ, թո՛ղ, ձեռը թափ տալով՝ ձայնը բարձրացրեց Մարկոսը:

Եվ Զարմանը, որ այն կարծիքի էր, թե տղամարդը, ինչ էլ լինի, տասն անգամ խելոք է կնոջից, մասնավորապես իր ամուսինը, որին «սաղ գեղը երեսփոխ էր ընտրել» և որը իրիկուն-առավոտ Աստվածաշունչ էր կարդում, լռեց, մտածելով, թե Մարկոսը երևի մի բան գիտի, որ սաստում է իրեն:

Եվ նա չէր սխալվում:

Հետևյալ օրը՝ առավոտյան Մարկոսը որդուն կանչեց իր մոտ և ամենայն զգուշությամբ հայտնեց նրան, որ իրենց մառանից գողություն է կատարվում:

Ես կարծում եմ, ասաց, էդ գողը Ադամը պրտի ըլի...

Ու հարցրեց որդու կարծիքը, թե իսկապես հոտաղը կանի այդ բանը. ի՞նչ է կարծում Արտուշը:

Արտուշը, որ մինչ այդ գլուխը կախ լսում էր հորը, նրա վերջին խոսքերի վրա՝ գլուխը բարձրացրեց և նայեց հոր երեսին:

Ինչո՞ւ չի անի որ... Նա ամեն օր էլ գողություն է անում. տավարը գնալիս հանդից միշտ կարտոլ է գողանում ու հանդում էլ խորովում: Կարտոլ գողացողը՝ մառանից էլ գողություն կանի...

Շատ կարելի է, ասաց Մարկոսը: Ես էլ կարծում եմ, որ նա է գողանում, բայց բանն էս է, թե ինչո՞վ է բաց անում փակ դուռը, ձեռին բանալի բան չունի...

Արտուշը խնդաց.

Դա դժար բան է՞. բանալի գտած կլինի կամ թե չէ, ինչ կա որ, մեխով բաց կանի:

Շատ կարելի է, հավանություն տվեց հայրը: Բա հիմի ո՞նց անենք, որ դրան բռնենք:

Արտուշը լուռ էր:

Դու կարո՞ղ ես բռնել, շարունակեց Մարկոսը:

Ինչի՞ չեմ կարող, պատասխանեց Արտուշն ինքնավստահ, կբռնեմ ու հլա հերն էլ կանիծեմ:

Մարկոսը լռեց մի փոքր:

Դե լավ, ասաց նա տեղից ելնելով: Արի գնանք:

Եվ նա որդուն տարավ մառան:

Տեսնո՞ւմ ես, ասաց Մարկոսը որդուն, ցույց տալով տանձի, խնձորի, խաղողի ու սերկևիլի կախանները: Տեսնո՞ւմ ես սրանք: Լավ տես, որ հետո եթե գողանան հաշիվը միտդ ըլի...

Արտուշը գլուխը բարձրացնելով նայեց մեկ-մեկ առաստաղից քաշ ընկած կախաններին և մտքում հաշվեց ինչ-որ:

Հիմի արի էստեղ, կանչեց հայրը նրան, և մի առ մի խուփերը վերցնելով, ցույց տվեց թթվի, պանրի, մեղրի կճուճները:

Էս բոլորը, ասաց Մարկոսը, քեզ եմ թողնում: Հիմի տեսնենք ոնց պիտի պահես: Եթե գողին բռնեցիր էն է հո կեցցե՛ս. թե չէ՝ ամոթ քեզ:

Այս ասելով՝ Մարկոսը խնամքով փակեց մառանի դուռը, և բանալին, ինչպես մի սրբազան ավանդ, հանդիսավոր հանձնեց որդուն:

Այդ օրվանից մառանից էլ բան չէր գողացվում:

1915